



## ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ

ԼՂՀ վերաքննիչ դատարանի որոշում  
Քաղաքացիական գործ N 0973/02/11թ.

Քաղաքացիական գործ N 0973/02/11թ.

Նախագահող դատավոր՝ Հ.Խաչատրյան  
Դատավորներ՝ Գ.Արզումանյան  
Հ.Աբրահամյան

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

#### ՀԱՆՈՒՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ք. Ստեփանակերտ

31-ին հունվարի 2012թ.

ԼՂՀ Գերագույն դատարանը (այսուհետ՝ Գերագույն դատարան) վճռաբեկության կարգով՝

Նախագահությամբ՝ դատավոր  
Դատավորներ՝

Ի.Կարապետյանի  
Կ.Ղարայանի  
Գ.Գրիգորյանի

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ըստ հայցի Հովիկ Սուրենի Իշխանյանի ընդդեմ «Ֆորտե» ՍՊԸ, Արտակ Արմենի Շահրամանյանի և Արա Վլադիմիրի Ալահվերդյանի՝ 662.900 դրամ վնասի փոխհատուցման պահանջի մասին քաղաքացիական գործով ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2011թ. նոյեմբերի 25-ի որոշման դեմ հայցվորի ներկայացուցիչ Արտյուշա Սմբատի Մադայանի վճռաբեկ բողոքը,

### Պ Ա Ր Զ Ե Ց.

#### 1. Գործի դատավարական նախապատմությունը.

Հայցվոր Հովիկ Սուրենի Իշխանյանը հայցադիմում ներկայացնելով դատարան՝ խնդրել է «Ֆորտե» ՍՊԸ-ից, Արա Ալահվերդյանից և Արտակ Շահրամանյանից հոգուտ իրեն բռնագանձել 662.900 (վեց հարյուր վաթսուներկու հազար ինը հարյուր) ՀՀ դրամ՝ որից 650.000 ՀՀ դրամը պատճառված նյութական վնասի, իսկ 12.900 ՀՀ դրամն ապացույց ձեռք բերելու համար ծախսած գումարի հատուցում:

ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011թ. սեպտեմբերի 28-ի վճռով հայցը մերժվել է:

ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2011թ. նոյեմբերի 25-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն: Ամբողջությամբ բեկանվել է ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի թիվ ԸԲԴ 0973/02/11թ. քաղաքացիական գործով 2011 թվականի սեպտեմբերի 28-ի վճիռը և ամբողջովին կարճվել քաղաքացիական գործի վարույթը՝ վեճը դատարանում քննության ենթակա չլինելու հիմքով:

Նշված որոշման դեմ 2011թ. դեկտեմբերի 14-ին վճռաբեկ բողոք է բերել հայցվորի ներկայացուցիչ Արտյուշա Սմբատի Մադաթյանը:

Վճռաբեկ բողոքին գրավոր պատասխան չի ներկայացվել:

Գերագույն դատարանի 2011թ. դեկտեմբերի 29-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է դատարանի վարույթ:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոնշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ու կիրառել «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ԼՂՀ օրենքը, որը չպետք է կիրառեր, այլ պետք է կիրառեր ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 14-րդ, 17-րդ, 1058-րդ, 1072-րդ հոդվածների պահանջները և ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 4-րդ կետերով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում բեկաներ ստորադաս դատարանի վճիռը:

Բողոք բերած անձը նշված պնդումները հիմնավորել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը, մատնանշելով ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին կետի, 10-րդ հոդվածի 1-ին կետի 9-րդ ենթակետի, 983-րդ հոդվածի 2-րդ կետի և «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ԼՂՀ օրենքի պահանջները, եզրահանգել է, որ իր վստահորդին պատճառած վնասը հատուցելու պարտականությունը վերապահված է Բյուրոյին, որը հանդիսանում է երաշխավորման ֆոնդի կառավարիչն ու սեփականատերը, այսինքն՝ դատարանը համոզված նշել է, որ իր վստահորդի կողմից ներկայացված հայցի հիմքը չի բխում օրենքից, հետևաբար և նման վեճը ենթակա չէ դատարանում քննությանը: Նմանը չի ընդունվում հայցվորի կողմից, քանի որ օրենսդիրը միանշանակ և հստակ սահմանում է, որ դատարան դիմող շահագրգռված անձը, այսինքն՝ հայցվորն է որոշում իր կողմից առաջադրվող պահանջի հիմքում ընկած փաստերի շրջանակը կամ հիմքը, և գործը քննող դատարանն էլ վերջնականորեն ինքն է որոշում հայցի հիմքը կազմող իրավաբանական փաստերը: Նման պայմաններում իր վստահորդի կողմից ներկայացրած հայցապահանջի հիմքը՝ /ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 14-րդ, 17-րդ, 1058-րդ, 1072-րդ հոդվածների պահանջները/ միանգամայն գործող օրենքի շրջանակներում է՝ առավել ևս, որ գործը քննող դատարանը նույնպես իր լիազորությունների շրջանակներում գործը քննել է այդ հիմքով:

Վերաքննիչ դատարանը, չնայած մատնանշել է ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին կետի պահանջները, այն որ «ԼՂՀ քաղաքացիական օրենսդրությունը կազմված է սույն օրենսգրքից և քաղաքացիական իրավունքի նորմեր պարունակող այլ օրենքներից: Այլ օրենքներում պարունակող քաղաքացիական իրավունքի նորմերը պետք է համապատասխանեն սույն օրենսգրքին», սակայն անտեսել է այն հանգամանքը, որ հենց իր կողմից մատնանշված օրենքների պահանջներին համապատասխան, գործող քաղաքացիական օրենսգրքը, կոնկրետ դեպքում, առաջնային դեր է խաղում, այսինքն իր վստահորդին պատճառած վնասի հատուցման համար որպես իրավական հիմք պետք է

ծառայեն քաղաքացիական օրենսգրքի իրենց կողմից մատնանշված վերոհիշյալ հոդվածների պահանջները, առավել ևս, որ ինչպես պարզվում է Վերաքննիչ դատարանի կողմից հիմք ընդունած Օրենքի 1-ին հոդվածի պահանջներից՝ «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ԼՂՀ օրենքը կարգավորում է ավտոտրանսպորտային միջոցների օգտագործման հետևանքով տուժած անձանց պատճառված վնասներից բխող ավտոտրանսպորտային միջոցների սեփականատերերի, ինչպես նաև օրինական հիմքերով դրանք տիրապետող այլ անձանց պատասխանատվության պարտադիր ապահովագրության հետ կապված հարաբերությունները ... և այլն: Դա վերաբերում է ավտոտրանսպորտային միջոցների սեփականատերերի այն հարաբերություններին, որոնք պարտադիր կարգով կապված են ապահովագրության հետ:

Քաղաքացիական գործի նյութերով ապացուցված է, որ պատահարին մասնակից երկու ավտոմեքենաներն էլ պատահարի պահին ապահովագրված չեն եղել, ուստի Վերաքննիչ դատարանի կողմից հիմք ընդունած Օրենքի պահանջները սույն վեճի լուծման համար կիրառելի չեն:

Բողոք բերած անձը խնդրել է բեկանել ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2011թ. նոյեմբերի 25-ի որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ հայցապահանջը բավարարելու մասին:

### **3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. 2011թ. մայիսի 14-ին Ստեփանակերտ քաղաքի Մաշտոց-Շեքիմյան փողոցների խաչմերուկում ՎԱԶ 2107 մակնիշի S 9064 համարանիշի և ԲՄՎ-525i մակնիշի 01 SU 702 համարանիշի ավտոմեքենաների բախման փաստի կապակցությամբ հավաքված նյութերով ԼՂՀ ոստիկանության ՃՈ ՃՊԾ թիվ 1 սպայական դասակի ավագ տեսուչ, ոստիկանության մայոր Ա.Միրզոյանի կողմից 2011թ. մայիսի 14-ին կազմված եզրակացության համաձայն, 2011թ. մայիսի 14-ին մոտավորապես ժամը 22-ի սահմաններում ՎԱԶ-2107 մակնիշի S 9064 համարանիշի ավտոմեքենան, որի վարորդն է Արտակ Արմենի Շահրամանյանը, երթնեկելով Մաշտոց փողոցով կարգավորվող խաչմերուկում, չի ենթարկվել լուսացույցի կարմիր լույսի ազդանշանին, որի հետևանքով բախվել է ԲՄՎ-525i մակնիշի 01 SU 702 համարանիշի ավտոմեքենային, որի վարորդն է Սուրեն Հովհիկի Իշխանյանը, ՃՏՊ-ից հետո վարորդները թողել են դեպքի վայրը և հեռացել:

2. Գործի նյութերում բացակայում են համապատասխան ապացույցներ՝ 2010թ. նոյեմբերի 13-ի «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՕ-44-Ն ԼՂՀ օրենքի պահանջներին համաձայն ապահովագրական պատահարի մասնակից սույն գործով կողմերի վարած ավտոտրանսպորտային միջոցները պարտադիր ապահովագրված լինելու մասին ու ըստ կողմերի ցուցմունքների, որպես պատահարի մասնակիցների տրանսպորտային միջոցներն ապահովագրված չեն:

### **4.Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Քննելով վճարել բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Գերագույն դատարանը գտնում է, որ վճարել բողոքը քաղաքացիական գործի վարույթն անհիմն կարճելու վերաբերյալ հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նյութական իրավունքի նորմերը համարվում են խախտված կամ սխալ կիրառված, եթե դատարանը՝

1) չի կիրառել այն օրենքը կամ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջազգային պայմանագիրը կամ իրավական այլ ակտը, որը պետք է կիրառեր.

2) կիրառել է այն օրենքը կամ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջազգային պայմանագիրը կամ իրավական այլ ակտը, որը չպետք է կիրառեր.

3) սխալ է մեկնաբանել օրենքը կամ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջազգային պայմանագիրը կամ իրավական այլ ակտը:

Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ նյութական իրավունքի նորմի խախտումը կամ սխալ կիրառումը վճռի բեկանման հիմք է, եթե հանգեցրել է գործի սխալ լուծման:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 241-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ դատավարական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը վճռի բեկանման հիմք է, եթե հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել գործի սխալ լուծման: Դատարանի՝ ըստ էության ճիշտ վճիռը չի կարող բեկանվել միայն ձևական նկատառումներով:

Նշված հոդվածների մեկնաբանությունից ուղղակիորեն հետևում է, որ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածով սահմանված իր լիազորությունների շրջանակներում, վերաքննիչ դատարանի դատական ակտը փոփոխվելու դեպքերում Գերագույն դատարանն ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է վերանայվող դատական ակտը և բավարարում վճռաբեկ բողոքը այն դեպքում, երբ վճռաբեկ բողոքում նշված փաստարկներն էական են գործի ըստ էության ճիշտ լուծման համար, և երբ վերանայվող դատական ակտն անհիմն ու անօրինական է, կայացվել է դատավարական իրավունքի նորմերի այնպիսի էական խախտումներով, որոնք հանգեցրել են գործի սխալ լուծմանը:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետի համաձայն՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերանայման արդյունքով Գերագույն դատարանն ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարում է վճռաբեկ բողոքը՝ համապատասխանաբար ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանելով դատական ակտը: Բեկանված մասով գործն ուղարկվում է համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը: Չբեկանված մասով դատական ակտը մնում է օրինական ուժի մեջ:

Սույն քաղաքացիական գործի նյութերից հետևում է, որ 2011թ. մայիսի 14-ին մոտավորապես ժամը 22-ի սահմաններում ՎԱԶ-2107 մակնիշի S 9064 համարանիշի ավտոմեքենան, որի վարորդն է Արտակ Արմենի Շահրամանյանը, երթևեկելով Մաշտոց փողոցով կարգավորվող խաչմերուկում, բխվել է ԲՄՎ-525i մակնիշի 01 SU 702 համարանիշի ավտոմեքենային, որի վարորդն է Սուրեն Հովհիկի Իշխանյանը: ՃՏՊ-ից հետո վարորդները թողել են դեպքի վայրը և հեռացել:

Գործի նյութերում բացակայում են համապատասխան ապացույցներ՝ 2010թ. նոյեմբերի 13-ի «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՕ-44-Ն ԼՂՀ օրենքի /այսուհետ՝ Օրենք/ պահանջներին համաձայն ապահովագրական պատահարի մասնակից սույն գործով կողմերի վարած ավտոտրանսպորտային միջոցները պարտադիր ապահովագրված լինելու մասին ու ըստ կողմերի ցուցմունքների՝ պատահարի մասնակիցների տրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվությունը ապահովագրված չէ:

«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ԼՂՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքը կարգավորում է ավտոտրանսպորտային միջոցների օգտագործման հետևանքով

տուժած անձանց պատճառված վնասներից բխող ավտոտրանսպորտային միջոցների սեփականատերերի, ինչպես նաև օրինական հիմքերով դրանք տիրապետող այլ անձանց պատասխանատվության պարտադիր ապահովագրության հետ կապված հարաբերությունները...:

Համաձայն Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի՝ տուժող /տուժած անձ/ է համարվում ավտոտրանսպորտային միջոցի օգտագործման հետևանքով սույն օրենքով նախատեսված անձնական կամ գույքին պատճառված վնասներ կրած ցանկացած անձ, որը սույն օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված կարգով ունի հատուցման իրավունք, իսկ ըստ նույն մասի 15-րդ կետի՝ ապահովագրական հատուցումը՝ ապահովագրական պատահարի դեպքում ապահովագրական ընկերության կողմից տուժողին կամ օրենքով և /կամ/ ԱՊՊԱ պայմանագրով նախատեսված դեպքերում այլ անձանց վճարման ենթակա գումարն է: Սույն օրենքի իմաստով՝ ապահովագրական հատուցումը նաև սույն օրենքի 49-րդ հոդվածով նախատեսված դեպքերում Երաշխավորման ֆոնդի միջոցների հաշվին Բյուրոյի կողմից՝ տուժած անձանց պատճառած վնասների հատուցումն է, եթե այլ բան սահմանված չէ սույն օրենքով կամ չի բխում կոնկրետ դրույթի իմաստից:

Օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը սահմանում է, որ Երաշխավորման ֆոնդի միջոցների հաշվին տուժած անձանց պատճառված վնասները սույն օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված գումարների սահմաններում և սույն օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասով և 11-18-րդ հոդվածներով սահմանված դրույթներին համապատասխան հատուցվում են, եթե ... 2/ վնասը պատճառվել է այն ավտոտրանսպորտային միջոցի օգտագործմամբ, որի վերաբերյալ կնքված չէ ԱՊՊԱ պայմանագիր:

Նշված հոդվածների մեկնաբանությունից հետևում է, որ Երաշխավորման ֆոնդի միջոցների հաշվին տուժած անձանց պատճառված վնասները հատուցվում են, եթե վնասը պատճառվել է այն ավտոտրանսպորտային միջոցի օգտագործմամբ, որի վերաբերյալ կնքված չէ ԱՊՊԱ պայմանագիր, սակայն Օրենքը չի կարգավորում այն դեպքերը, երբ անձինք չապահովագրված ավտոտրանսպորտային միջոցի օգտագործման հետևանքով կրել են վնասներ այլ ավտոտրանսպորտային միջոցի օգտագործմամբ, որի վերաբերյալ կնքված չէ ԱՊՊԱ պայմանագիր:

Հետևաբար, Գերագույն դատարանը գտնում է, որ «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ԼՂՀ օրենքը սույն վեճի լուծման համար կիրառելի չէ:

Գերագույն դատարանը վճռաբեկ բողոքի մյուս փաստարկներին չի անդրադառնում, քանի որ դրանք կապված են գույքին պատճառված վնասներին և դրանում անձի մեղավորության հարցի հետ:

Այսպիսով, սույն գործով հաստատված փաստերի հիման վրա Գերագույն դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը սխալ է կիրառել «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ԼՂՀ օրենքը, ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 99-րդ հոդվածի 1-ին կետը, 231-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը, ու դատարանի հետևությունները հիմնված չեն գործում առկա այն ապացույցների հետազոտման և գնահատման վրա, որոնք բավարար են եղել գործի ըստ էության ճիշտ լուծման համար, իսկ վճռաբեկ բողոքում բերված փաստարկները գործի ըստ էության ճիշտ լուծման համար ունեն էական նշանակություն, ուստի ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետով սահմանված լիազորության ուժով՝ վճռաբեկ բողոքը պետք է բավարարել, իսկ վերանայվող դատական ակտը բեկանել՝ գործն ուղարկելով ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարան՝ նոր քննության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-256-րդ հոդվածներով՝ Գերագույն դատարանը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Հայցվորի ներկայացուցիչ Արտյուշա Սմբատի Մադաթյանի վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2011թ. նոյեմբերի 25-ի որոշումը և գործն ուղարկել ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարան՝ նոր քննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ՝**

**Ի.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

**ԴԱՏԱՎՈՐՆԵՐ**

**Կ.ՂԱՐԱՅԱՆ  
Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ**